

Տ. ՀՈՎՆԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1957 թ. Բեյրութում (Լիբանան): Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի «Քառասնից մանկանց» վարժարանում:

1970—75 թթ. սովորել է Անթիլիասի դըպրեվանքում և ավարտել ժառանգավորաց վարժարանի հնգամյա շրջանը:

1976 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որի լսարանական բաժինն ավարտել է 1979 թ. մայիսին: 1980 թ. ապրիլի 22-ին պաշտպանել է իր ավարտաճառը՝ «Վրթանես քերթող» թեմայով:

1978 թ. մայիսի 27-ին ձեռնադրվել է սարկավագ:

1980 թ. հունիսի 8-ին, Ս. Էջմիածնի Կաթողիկեի տոնին, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի:

1980—83 թթ. ուսանել է Լոնդոնում, ապա Վեհափառ Հայրապետի հրավերով դասավանդել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

1985 թ. նշանակվել է Կանադայի Թորոնթո քաղաքի հայության հոգևոր հովիվ:

1989 թ. Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ստացել է ծայրագույն վարդապետության տասը աստիճաններ:

1990 թ. մայիսին ընտրվել է Կանադայի հայոց թեմի առաջնորդ: Նույն թվականի հոկտեմբերի 7-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

Հովնան եպս. Տերտերյանը ունի բազմաթիվ հրատարակություններ և հոդվածներ, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացրել ընթերցասեր շրջանակներում: